ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2638 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 63 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԻՆԱ ԶՈՐԻԿԻ ՄԱՀՏԵՍՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ԶՈՐԻԿԻ ԱԶԱՐՅԱՆԻ, ՀԱՅԿ ՆՈՐԻԿԻ ԱԶԱՐՅԱՆԻ, ԼԱԼԱ ՆՈՐԻԿԻ ԱԶԱՐՅԱՆԻ, ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐԻ ԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Իրինա Զորիկի Մահտեսյանի (ծնված 23.05.1974թ.), Մարինե Զորիկի Ազարյանի (ծնված 06.11.1971թ.), Հայկ Նորիկի Ազարյանի (ծնված 02.11.1970թ.), Լալա Նորիկի Ազարյանի (ծնված 13.05.1974թ.), Լիդա Եղիազարի Ազարյանի (ծնված 18.02.1951թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63 հասցեում Իրինա Զորիկի Մահտեսյանին, Մարինե Զորիկի Ազարյանին, Հայկ Նորիկի Ազարյանին, Լալա Նորիկի Ազարյանին, Լիդա Եղիազարի Ազարյանին պատկանող օրինական հողամասին կից օգտագործվում է 291.3քմ մակերեսով հողամաս, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 09.01.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 03.04.2009թ. հ.20/2-Ե/174 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.03.2009թ. հ.20-Ել-2079 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Իրինա Զորիկի Մահտեսյանի, Մարինե Զորիկի Ազարյանի, Հայկ Նորիկի Ազարյանի, Լալա Նորիկի Ազարյանի, Լիդա Եղիազարի Ազարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական

հողամասին կից 291.3քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 291.3քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Իրինա Զորիկի Մահտեսյանի, Մարինե Զորիկի Ազարյանի, Հայկ Նորիկի Ազարյանի, Լալա Նորիկի Ազարյանի, Լիդա Եղիազարի Ազարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ